## Մասնագիտական հանդերձանք

**Մասնագիտական ճիշտ հանդերձանքը պաշտպանում է բուժքրոջը, հիվանդներին և հիվանդանոցային միջավայրը:**

Աշխատանքային արտահագուստը պետք է լինի՝

- մաքուր, կոճկված և հարմարավետ՝ ձեռքերի լվացմանը չխանգարելու համար,
- փոխվի ամեն օր, իսկ կեղտոտվելու դեպքում՝ անմիջապես,
- բաժանմունքից, վիրակապարանից և բուժ միջամտությունների սենյակից դուրս անհրաժեշտ է բժշկական համազգեստի վրա հագնել խալաթ:

### Կոշիկները պետք է լինեն՝

- անաղմուկ,
- փակ,
- լվացվող,
- հարմարավետ,
- կիսագուլպաները պետք է լինեն սպիտակ կամ բաց գույնի:

### Արտաքին տեսքը

- մազերը պետք է լինեն հավաքված,
- եղունգները պետք է լինեն կարճ կտրված, մաքուր, առանց արհեստական եղունգների,
- աշխատավայրում չի կարելի կրել զարդեր,
- աշխատանքի ընթացքում շպարը պետք է լինի չափավոր:

Միշտ պետք է հիշել, որ բուժքրոջ մասնագիտության էթիկական հիմքը կազմում են մարդասիրությունն ու գթասրտությունը: Չի կարելի խախտել բժշկության հնագույն պատվիրանը՝

## Մի՛ վնասիր

Այս պարզ կանոնները կնպաստեն ապահովելու աշխատանքի բարձր որակ:

Որակի հսկումը բնութագրվում է որպես առողջապահական համակարգի աչքեր և ականջներ, առանց որոնց մենք չէինք կարողանա իմանալ, թե որտեղ ենք և ուր ենք գնում:

Ա. Տոնապետյան

ՀՀ ԱՆ «Ներհիվանդանոցային ինֆեկցիաների կանխարգելման գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ

Վաճառքի ենթակա չէ Not for sale

# Օգնի՛ր

## Ես բարիք կպարգևեմ հիվանդին, կամ գոնե չեմ վնասի նրան

Վարվիր հիվանդի հետ այնպես, ինչպես կցանկանայիր, որ վարվեին քեզ հետ հիվանդ լինելիս:

Հիպոկրատ